# ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

# «ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**Էլեկտրոնային գիրք**, 66 **էջ**

© **Գրքի բոլոր իրավունքները պաշտպանված են**, 2017 **թ**.

This e-Book is Copyright protected
© All Rights Reserved, 2017

«ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» գրական–բնապահպանական մրցույթի կազմակերպումը՝ https://arlenshah.wordpress.com/ գրական բլոգ-կայքի կողմից:

Մրցույթի հեղինակ և կազմակերպիչ՝ գրող **Առլեն Շահվերդյան**

«ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» գրական–
բնապահպանական մրցույթի աջակից՝

Բնության համաշխարհային հիմնադրամի
հայաստանյան մասնաճյուղ
(«WWF-**Հայաստան**»)

Այցելիր՝ «WWF-**Հայաստանի» վեբկայքը**
Միացիր՝ WWF-**Հայաստանի ֆեյսբուքյան էջին**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Նախաբան**. «Հանուն Բնության» գրական մրցույթի մասին..... 6

WWF-**Հայաստան**..... 12

**Մրցույթի հաղթողներ**.....17

**Մարինե Աբգարյան**..... 18

– ***«Հանուն բնության»*** *(բանաստեղծություն)*.....19

**Աննա Անդրեասյան**.....21

– ***«Ես սիրում եմ»*** *(բանաստեղծություն)*.....22

**Հռիփսիմե Պետրոսյան**.....24

– ***«Բնությունը հրաշագեղ է»*** *(պատմվածք)*..... 25

**Արմինե Պողոսյան**.....30

– ***«Բնության խոսքեր»*** *(բանաստեղծություն)*.....31

**Նաիրե Սահակյան**.....32

– ***«Անկեղծ ասած, ես հոգնել եմ...»*** *(բանաստեղծություն)*.....33

**Սոնա Վանյան**..... 35

– ***«Եղևնուկը»*** *(պատմվածք)*..... 36

**«Հանուն Բնության» գրական մրցույթի մրցանակաբաշխության պատկերասրահ**..... 41

**Արտամրցութային ստեղծագործություններ**.....47

**Ալբինա Գրիգորյան (Տալիթա)**.....48

– ***«Մայր-Ցամաք»*** *(բանաստեղծություն)*..... 49

**Անի Խաչատրյան**.....53

– ***«Ստեղծագործողի հոգին ու բնությունը»*** *(գրական էսսե)*..... 54

**Կարինե Փանոսյան**..... 57

– ***«Մահացող անտառներ»*** *(պատմվածք)*.....58

**Ինչպե՞ս ունենալ այսպիսի էլեկտրոնային գիրք**.....62

## «ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» ԳՐԱԿԱՆ–ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ. ԵՐԲ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՆ ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ՄԻՏՔԸ

2017 թ. սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 9-ը համացանցում, մասնավորապես՝ https://arlenshah.wordpress.com/ գրական–բնապահպանական բլոգ-կայքում և «Ֆեյսբուքի» հայկական տիրույթում, անցկացվեց բնությանը նվիրված բացառիկ գրական մրցույթ, որի մասնակիցներին ընձեռվեց եզակի հնարավորություն, առանց մեծ ջանքերի գործադրման, իրենց գրական տաղանդի շնորհիվ նպաստելու բնապահպանությանն ու բնաճանաչողության մակարդակի բարձրացմանը, իսկ մրցույթում հաղթելու դեպքում՝ նվեր ստանալու բնությանը վերաբերող բնապահպանական բացառիկ գրքեր և հուշանվերներ:

«Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի հեղինակ և կազմակերպիչ՝ գրող **Առլեն Շահվերդյանը**, ցանկացել է բնապահպանության գաղափարի շուրջ համախմբել բնություն սիրող ու ստեղծագործող մարդկանց և գրականության միջոցով օգտավետ քայլ անել բնություն–ստեղծագործ միտք ներդաշնակ կապի զարգացման ուղղությամբ՝ փառաբանելով բնությունը և ստեղծագործ մարդու գրական տաղանդը: Այսպիսով՝ «Հանուն Բնության» գրական մրցույթը՝ որպես ուրույն մրցակցություն, կրում էր միայն գրական, բնապահպանական և բնաճանաչողական նպատակ: Մրցույթը չէր հետապնդում կոմերցիոն որևէ նպատակ:

Գիտելիքի օրը՝ սեպտեմբերի 1-ին, մեկնարկած «Հանուն Բնության» գրական մրցույթը անմիջապես մեծ հետաքրքրություն առաջացրեց երիտասարդ ստեղծագործողների շրջանում՝ ձևավորելով բնության թեմայով ստեղծագործելուն միտված դրական, բարի միջավայր և տրամադրություն: Մեկ ամիս շարունակ ստեղծագործող բազմաթիվ երիտասարդներ համակված էին բնապահպանական ոգով: Որպես արդյունք՝ մրցույթի մասնակիցներն իրենց չափածո և արձակ գրական ստեղծագործություններով ուրույն քայլ արեցին հանուն բնության՝ սեփական

լուման ներդրելով մարդ–բնություն կենսական, կարևոր և փխրուն կապի ամրապնդման գործում:

Հատկանշական է, որ այս գրական մրցույթը ոչ միայն բացառիկ հնարավորություն էր ցանկացած բնասեր հայ հեղինակի համար նպաստելու բնապահպանական ու բնաճանաչողական նյութերի և բնության նկատմամբ սիրո ու գորովանքի տարածմանը, այլև ինքնաարտահայտման ուրույն միջոց էր բնությանը իր ստեղծագործությունը ձոնելու և դրանով իսկ հանրությանը ներկայանալու համար: Այսպիսով՝ մրցույթի միջոցով հնարավորություն ստեղծվեց ավելի սերտացնելու գրող–ընթերցող կապը, ծավալելու ավելի սերտ և ուրույն ստեղծագործական համագործակցություն:

Մասնակիցների ստեղծագործությունները տեղադրվեցին Առլեն Շահվերդյանի հեղինակած մեկ այլ՝ **«Արվեստասեր» բլոգ-կայքում**: Որպես անակնկալ նվեր և ստեղծագործական խրախուսանք, մրցույթի մեկնարկից անմիջապես հետո նույն կայքում հետագայում մրցույթի մասնակիցների մյուս ստեղծագործությունները ներկայացնելու համար բացվեցին նրանց անվանական բաժինները:

Տասնյակ հազարավոր ընթերցասերների և բազմաթիվ տաղանդավոր ստեղծագործողների ուշադրության կենտրոնում գտնվող գրական այս մրցույթը համախմբեց տարբեր մասնագիտությունների տեր բազմաթիվ բնասեր մարդկանց, որոնք ողջունեցին, մեծապես գնահատեցին և սատարեցին այս գաղափարը: Շատերն էին համակվել բնությունը գովերգելու տրամադրությամբ:

Սեպտեմբերի 24-ին ավարտվեց հայտերի ընդունման ժամկետը: Մրցույթին մասնակցության հայտ ներկայացրեցին 6 հեղինակ՝ Երևանից և Հայաստանի տարբեր մարզերից *(ըստ ազգանունների այբբենական կարգի)*՝ **Մարինե Աբգարյան**, **Աննա Անդրեասյան**, **Հռիփսիմե Պետրոսյան**, **Արմինե Պողոսյան**, **Նաիրե Սահակյան** և **Սոնա Վանյան**:

Համաձայն մրցույթի կարգի՝ հաղթողներին որոշելու համար https://arlenshah.wordpress.com/ բլոգ-կայքում սեպտեմբերի

25-ից հոկտեմբերի 1-ը անցկացվեց օնլայն քվեարկություն, և մասնակիցների միջև ծավալվեց լարված և հետաքրքիր պայքար:

Սակայն քվեարկության ավարտին նրանց սպասվում էր «Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի **ամենամեծ և գլխավոր անակնկալը**, քանի որ մրցույթի հաղթողներ ճանաչվեցին **բոլոր 6 հեղինակները**, իսկ օնլայն քվեարկության բաց արդյունքներով որոշվեցին մրցույթում նրանց զբաղեցրած 1-6 **տեղերը՝ ըստ հավաքած ձայների քանակի**: Մրցույթի օնլայն քվեարկությունը ընդամենը ազնիվ ու թափանցիկ մրցակցության միջոց էր հեղինակների միջև՝ իրենց ստեղծագործություններն ավելի մեծ լսարանի հասցնելու համար: Նրանք, ծանոթ ու անծանոթ ընթերցողներին հորդորելով քվեարկել իրենց օգտին, այդպիսով նպաստեցին գրական ստեղծագործության միջոցով բնության նկատմամբ ուշադրության և գորովանքի տարածմանը: **Քվեարկությանը մասնակցած 3766 ընթերցող** երիտասարդ և շնորհալի հեղինակների ստեղծագործությունների միջոցով հաղորդակից դարձավ բնությանն ու բնապահպանական խնդիրներին, ավելի մեծ գորովանքով լցվեց բնության նկատմամբ, ինչը «Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի գլխավոր նպատակն էր: Մրցույթի բոլոր մասնակիցներին հաղթող ճանաչելը ցույց տվեց, որ «Հանուն Բնության» մրցույթում պարտվողներ չկան, հաղթում են բոլորը՝ հեղինակներն ու ընթերցողները, հաղթանակում և արժեքավորվում է սերը, հոգածությունն ու հարգանքը բնության նկատմամբ: Մրցույթը ցույց տվեց, որ եթե ստեղծագործում ես բնության մասին և բնության համար, ապա դու արդեն հաղթող ես, արդեն շահել ես և քեզ հետ միասին շահում է բնությունը:

Հոկտեմբերի 9-ին **Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի** («WWF-**Հայաստան**») Կոնֆերենց սրահում կայացավ «Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի հանդիսավոր մրցանակաբաշխությունը: Մրցույթի կազմակերպիչ Առլեն Շահվերդյանին և բոլոր 6 հաղթողներին սիրով ընդունեց «WWF-Հայաստանի» տնօրեն **Կարեն Մանվելյանը**: Մրցանակաբաշխությանը մասնակցում էր նաև «WWF-Հայաստանի» ամբողջ անձնակազմը:

Կարեն Մանվելյանի և Առլեն Շահվերդյանի կողմից **մրցույթի հաղթողներին հանդիսավոր կերպով հանձնվեցին** նրանց պատվոգրերը, գրողի նվերները, մասնավորապես՝ «WWF-Հայաստանի» աջակցությամբ հրատարակված նրա հեղինակած **«Ապրելու իրավունք»** (գրանցված է **ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում**) և **«Լռության գինը»** վերնագրերով բնապահպանական հայտնի գրքերը, ինչպես նաև **«Գարնանային ռեքվիեմ»** վերնագրով պատմվածքների ժողովածուն: «WWF-Հայաստանը» մրցույթի բոլոր հաղթողներին սիրով նվիրեց բնության վերաբերյալ «Կանաչ Հայաստան» մեծարժեք գիրքը և «WWF»-ի պատկերանշանով գեղեցիկ հուշանվերներ (պայուսակներ, գլխարկներ և այլն):

Հատկանշական է, որ մրցույթի արդյունքներով հաղթող ճանաչված մասնակիցների հետ հանդիպումը «WWF-Հայաստանում» ինքնին խորհրդանշական էր: «WWF-Հայաստանը» աշխարհի ամենամեծ բնապահպանական կառույցի՝ «WWF»-ի հայաստանյան հարգարժան ներկայացուցչությունն է, որը մեծ ներդրում ունի հայրենի բնության պահպանության գործում: Այնպես որ, մրցույթի մասնակիցները հնարավորություն ունեցան հաղորդակից դառնալու «WWF-Հայաստանի» բազմամյա, շնորհակալ գործունեության արդյունքներին, ծանոթանալու «WWF-Հայաստանի»՝ բնապահպանությանն ուղղված նվիրական ջանքերին:

Առլեն Շահվերդյանը խորին շնորհակալություն հայտնեց «WWF-Հայաստանի» տնօրեն **Կարեն Մանվելյանին**, «WWF-Հայաստանի» Համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Հերմինե Հակոբյանին** և «WWF-Հայաստանի» ամբողջ անձնակազմին՝ մրցույթին աջակցելու համար: Նա մեծապես կարևորեց «WWF-Հայաստանի» բնապահպանական գործունեությունը և նշեց, որ այս կառույցի հետ իր ստեղծագործական-բնապահպանական հաջող և արգասաբեր համագործակցությունը տարիների պատմություն ունի: Նա նաև խորին շնորհակալություն հայտնեց մրցույթի մասնակիցներին, քանի որ նրանք իրենց ստեղծագործություններով նպաստեցին բնապահպանական խնդիրների վերհանմանը, ինչի շնորհիվ

տասնյակ հազարավոր մարդիկ լցվեցին բնապահպանական ոգով:

Կարեն Մանվելյանը ջերմորեն շնորհավորեց մրցույթի հաղթողներին: Նա բարձր գնահատեց «Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի կազմակերպումը գրող Առլեն Շահվերդյանի կողմից և գոհունակությամբ նշեց նրա ջանքերը, որոնք մշտապես ուղղված են բնության նկատմամբ սիրո և գորովանքի տարածմանը: «WWF-Հայաստանի» տնօրենը կարևորեց մրցույթի երիտասարդ մասնակիցների կողմից գրական ստեղծագործությունների միջոցով բնապահպանական խնդիրների արծարծումը, ինչը նպաստում է բնության նկատմամբ հարգալից վերաբերմունքի տարածմանն ու արմատավորմանը և հասարակության էկոլոգական գիտակցության ձևավորմանը:

Մրցանակաբաշխությունն անցավ ջերմ, տոնական մթնոլորտում: Հանդիպման ընթացքում մասնակիցները կարծիքներ փոխանակեցին բնապահպանական արդի խնդիրների վերաբերյալ:

«WWF-Հայաստանում» անցկացված մրցանակաբաշխությունից հետո Երևանի գեղատեսիլ այգիներից մեկում, բնության գրկում տեղի ունեցավ մրցույթի մասնակիցների հանդիպումը Նարեկացիագետ Սամվել Պողոսյանի հետ: Նա իր կողմից հատուկ մրցանակներ շնորհեց մրցույթի երիտասարդ հաղթողներին՝ «Իմ Նարեկացին», «Գրիգոր Նարեկացի. Հավատարմատ» և «Սուրբ Մեսրոպ Մաշտոց. Յաճախապատում եւ լուսաւոր ճառեր» արժեքավոր գրքերը: Ծավալվեց հետաքրքիր քննարկում Նարեկացու հարուստ ժառանգության, ինչպես նաև Աստված–բնություն և մարդ–բնություն հարաբերությունների վերաբերյալ: Մասնակիցները խորին շնորհակալություն հայտնեցին բարեշնորհ հեղինակին՝ նվերների համար:

«Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի ավարտին հաղթողներին ու բոլոր բնասեր ընթերցողներին անակնկալ նվերների շարքում իր բացառիկ տեղը զբաղեցրեց նաև հատուկ պատրաստված նկարազարդ և հարմարավետ էլեկտրոնային գիրք-ժողովածուն՝ մասնակիցների ստեղծագործությունների, արտամրցութային աշխատանքների ներ-

կայացմամբ և մրցույթի մասին մանրամասն տեղեկույթով: Նշված «e-Book»-ը հրապարակվեց և սիրով տրամադրվեց հեղինակներին, ընթերցողներին և լայն կիրառություն ստացավ համացանցում, իսկ «Հանուն Բնության» գրական մրցույթի վերաբերյալ հատուկ հաղորդագրությունը լայնորեն տարածվեց ՀԼՄ-ներում:

Ավարտվեց «Հանուն Բնության» գրական մրցույթը, որը ցույց տվեց, որ Բնությանը ձոնված ինքնատիպ գրական ստեղծագործություններով մասնակցելով մրցույթին՝ հեղինակները իրենց նպաստը բերեցին բնության նկատմամբ հետաքրքրության, սիրո և հարգանքի մեծացման նվիրական գործին:

© ArlenShah.wordpress.com

Նյութի աղբյուրը՝ Առլեն Շահվերդյանի գրական բլոգ-կայք:

Տես՝ https://arlenshah.wordpress.com/2017/10/09/arlen-shahverdyan-for-the-sake-of-nature-literary-competition-award-wwf-armenia/

*WWF-ի խորհրդանիշն ու պաշտոնական պատկերանշանը՝ հսկա պանդան (Ailuropoda melanoleuca)*

## ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ (WWF-ՀԱՅԱՍՏԱՆ)

WWF-WORLD WIDE FUND FOR NATURE ARMENIAN BRANCH

*WWF.* ***Առաքելությունը՝ կասեցնել երկրագնդի բնական միջավայրի դեգրադացիան և կառուցել այնպիսի ապագա, որտեղ մարդիկ ներդաշնակ կապրեն բնության հետ****:*

WWF-ը սկսել է աշխատել Հայաստանում 2002 թ-ից, իսկ 2006 թ-ի նոյեմբերին Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը (WWF Հայաստան) պաշտոնապես գրանցվել է Հայաստանում՝ հանդիսանալով WWF Կովկասյան ծրագրային գրասենյակի մի մաս:

WWF-Հայաստանի գործունեության հիմնական ուղղությունները.

- Զարգացնել և հզորացնել Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները (ԲՀՊՏ)՝ արգելոցները, ազգային պարկերը, արգելավայրերը և այլն,
- Պահպանել վտանգված տեսակները,
- Պահպանել և վերականգնել էկոհամակարգերը,
- Իրականացնել կլիմայի փոփոխության ազդեցությունը մեղմացնող գործողություններ,
- Ներդնել տնտեսական մեխանիզմներ տեղական համայնքներում այլընտրանքային կենսամիջոցների ստեղծման նպատակով՝ խթանելով բնական պաշարների կայուն օգտագործումը և պահպանելով կենսաբազմազանությունը,
- Աջակցել բնապահպանական իրազեկությանը և կրթությանը:

WWF-Հայաստանի առաջնահերթ խնդիրներից է վտանգված տեսակների պահպանությունը, որոնց շարքում են կովկասյան ընձառյուծը, հայկական մուֆլոնը, բեզոարյան այծը, գորշ արջը և այլն:

Վերջին 10 տարվա ընթացքում WWF-ը զգալի ջանքեր է ներդրել Կովկասում ընձառյուծի կարգավիճակի գնահատման ուղղությամբ: Շահագրգիռ կողմերի հետ համատեղ WWF-ը մշակել է Ընձառյուծի պահպանության տարածաշրջանային ռազմավարությունը և Հայաստանի համար ազգային գործողությունների ծրագիրը, որից հետո սկսել է դրա իրականացումը:

WWF-ի և ՀՀ բնապահպանության նախարարության սերտ համագործակցության արդյունքում մեծ նվաճումներ են ձեռք բերվել ԲՀՊՏ-ների համակարգի զարգացման գործում: Հայաստանի հարավում ստեղծվել է չորս նոր ԲՀՊՏ («Արևիկ» ազգային պարկը, «Զանգեզուր» և «Խուստուփ» պետական արգելավայրերը և «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը), որոնք ընդգրկում են ընձառյուծի հիմնական ապրելավայրերը: Դրանց ընդհանուր տարածքը 73229 հա է, ինչը կազմում է հանրապետության տարածքի 2,5 %-ը:

WWF-ի և Հայաստանի ու Վրաստանի կառավարությունների համատեղ ջանքերով, Գերմանիայի կառավարության ֆինանսական աջակցությամբ KfW բանկի միջոցով Կովկասի տարածաշրջանում ստեղծվել է առաջին անդրսահմանային պահ-

պանվող տարածքը՝ Հայաստանում «Արփի լիճ» և Վրաստանում «Ջավախեթի» ազգային պարկերը:

WWF-ը աջակցում է նաև ԲՀՊՏ-ներին տեխնիկական հզորությունների ստեղծման և մարդկային ռեսուրսի զարգացման ուղղությամբ՝ նպաստելով ԲՀՊՏ-ների կառավարման ծրագրերի իրականացմանը պահպանության, մոնիթորինգի, իրազեկության բարձրացման և էկոտուրիզմի ոլորտներում:

Վտանգված տեսակների պահպանությունն ուժեղացնելու նպատակով WWF-ը աջակցել է «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներին, «Արևիկ» ազգային պարկին, «Զանգեզուր» և «Խուստուփ» արգելավայրերին՝ տրամադրելով սարքավորումներ և համապատասխան հարմարություններ (պահակատներ պահպանության աշխատողների համար, ամենագնաց ավտոմեքենաներ, ճանապարհային արգելափակոցներ, հեռադիտակներ, ֆոտոխցիկներ, հանդերձանք և այլն):

ԲՀՊՏ-ներից դուրս վտանգված տեսակների պահպանությունն ապահովելու համար WWF-ը Սյունիքի, Վայոց Ձորի և Գեղարքունիքի մարզերի Բնապահպանության պետական տեսչություններին տրամադրել է անհրաժեշտ դաշտային միջոցներ՝ամենագնաց ավտոմեքենաներ, հեռադիտակներ, ֆոտոխցիկներ և այլն:

WWF-ը աշխատանքներ է կատարում նաև կլիմայի փոփոխության մեղմացման ուղղությամբ՝ իրականացնելով կլիմայի փոփոխության նկատմամբ անտառային էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացման միջոցառումներ: Մասնավորապես WWF-ը իրականացնում է ծրագրեր անտառվերականգնման և միատարր ծառուտների տրանսֆորմացիայի ուղղությամբ, որի արդյունքում դրանց կփոխարինեն կլիմայի փոփոխության նկատմամբ ավելի կայուն խառը լայնատերև անտառները:

WWF-ը հատուկ ուշադրություն է դարձնում ԲՀՊՏ-ների կից համայնքների տեղական բնակչությանը: Մենք իրականացնում ենք տեղական համայնքներում այլընտրանքային կենսամիջոցների ստեղծման ծրագրեր՝ էկոտուրիզմի (հյուրատներ և էկոերթուղիներ) և մեղվապահության զարգացում, պտղատու այգի-

ների հիմնում, անհրաժեշտ գյուղտեխնիկայի տրամադրում և այլն:

Առանց դոնորների աջակցության և համագործակցության WWF-ը չէր կարող հասնել հաջողությունների: Մենք շնորհակալ ենք մեր դոնորներից և գործընկերներից (Բնապահպանության նախարարություն, Եվրամիություն, CEPF, UNDP, GEF, Նորվեգիայի կառավարություն, CNF, Գերմանիայի կառավարություն (BMZ և BMU), KfW բանկ, WWF Գերմանիա, WWF Շվեյցարիա, WWF Նորվեգիա, Orange Հայաստան, HSBC Հայաստան, Պրոմեթեյ Բանկ և այլն) նրանց արժեքավոր ներդրման համար՝ ի նպաստ Հայաստանի բնության և կենսաբազմազանության պահպանությանը:

Նյութի աղբյուրը՝ WWF-Հայաստանի պաշտոնական կայքէջ:
Տես նաև՝ https://www.facebook.com/wwfarmenia/

# «ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԱԾ ԵՎ ՀԱՂԹԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՆՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ըստ՝ մրցույթի մասնակիցների ազգանունների այբբենական կարգի**

**ՄԱՐԻՆԵ ԱԲԳԱՐՅԱՆ**. Ծնվել է 1988 թ.-ին, Արմավիրում: 2005 թ.-ին ավարտել է միջնակարգ դպրոցը: Գրել սկսել է դպրոցական տարիներից:

Մարինեի ստեղծագործությունները ներկայացվել են «Լույս աշխարհ գրական կանթեղում», տպագրվել՝ ամսագրերում: Համոզված է, որ լավագույն ստեղծագործությունը ծնվում է հոգու ներշնչանքից...

Հոգու պոեզիան նո՛ւրբ ու թրթռուն
Թող միշտ ուղեկից լինի մեր կյանքում:
Անբաժան ինչպես երգից մեղեդին,
Երբ խոսքն անկեղծ է կապրեցնի սրտին...

Էլ. փոստ՝ abgaryan-88@list.ru

## ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ

Սիրում եմ կանաչդ կանչող,
Ափերում երազանք պահող:
Քարերդ ասուպ են սիրո.
Թող հոգուն բերեն անդորր:

Փոթորկուն հողմի ժամին
Աննահանջ լինենք կողքիդ,
Որ գարուն ծնվի նորից
Զարթոնքիդ անապակ շնչից:

Լուռ ցանի՛ր հույզի սերմեր,
Ընծայի՛ր սրտին արևի շողեր.
Թող մարդը դառնա
Քեզ անդավ ընկեր:

Հեղինակ՝
**Մարինե Աբգարյան**

Բանաստեղծությունը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի շրջանակներում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/03/marine-abgaryan-hanun-bnutyan-poem/

**ԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**. Ծնվել է 1989 թ.-ի օգոստոսի 19-ին, Լոռվա Վանաձոր քաղաքում: 1996 թ.-ին ընդունվել է տեղի՝ Պարույր Սևակի անվան թիվ 30 միջնակարգ դպրոցը: 2006 թ.-ին ավարտելով այն՝ ուսումը շարունակել է Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան Պետական մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի «Պատմություն» բաժնում: Մասնագիտությամբ պատմաբան է: 2013 թ.-ին աշխատանքի է անցել Ալեքսանդր Պուշկինի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում, որպես պատմության ուսուցչուհի: 2016 թ.-ից սկսել է աշխատել ՎՊՀ հենակետային վարժարանում:

Աննան ստեղծագործել սկսել է դեռևս դպրոցական տարիներից: Նրա ստեղծագործական մեծ ներշնչանքին էապես նպաստել և նպաստում է նաև Լոռվա դյութիչ և հպարտ բնությունը: Ստեղծագործում է տարբեր ոճերում՝ փորձելով հոգու խոսքը հասցնել ընթերցողի սրտին: Իր ստեղծագործություններով («Ես ուզում եմ այնպես սիրել» և «Մաքուր սեր») մասնակցել է տարբեր մրցույթների և ճանաչվել հաղթող:

Իսկապես մեծ է Աննայի սերը նաև բնության նկատմամբ: Նա ունի բնության հրաշագեղ պատկերները անմահացրած լուսանկարների մի ամբողջ հավաքածու և ապագայում ցանկանում է դառնալ նաև լուսանկարչուհի:

Էլ. փոստ՝ anna-andreasyan-1989@mail.ru

## ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ

Ես սիրում եմ երկինքը լուրթ,
Նրա շնչում խավար չկա՝
Լցված խեղդող դատարկությամբ,
Այլ ջինջ օդն է մաքո՛ւր, մաքո՛ւր՝
Օծված զուլալ մի պարզությամբ:

Ես սիրում եմ արևն այրող,
Նրա շողում բյուրեղ չկա՝
Լեցուն անմահ մի սառնությամբ,
Այլ ճաճանչն է տաքո՛ւկ-տաքո՛ւկ՝
Պարուրված խենթ մի ջերմությամբ:

Ես սիրում եմ ցոլքը լուսնի,
Նրա լույսից սառն է կաթում,
Բայց ո՛չ վանող մի սառնություն,
Այլ մտերի՛մ, մի քիչ հպարտ,
Աստղերի մեջ, բայց մի՛շտ մենակ,
Որ մութ հեռվից լույս է մաղում:

Ես սիրում եմ ամպրոպն ուժգին,
Նրա ձայնում կեղծիք չկա,
Որ թաքնվի խոսքերի տակ՝
Լցված գերող, սո՛ւտ քնքշությամբ:

Ես սիրում եմ անձրևը հորդ,
Այն արցունք է երկնից թափվող,
Նրա հոգում թախիծն է լոկ՝
Տխուր սրտից ալեկոծվող:

Ես սիրում եմ...
Ասե՞մ, թե ոչ, որ ես նաև կյանքն եմ սիրում,

Այն մաքրաձույլ լուսաբացը,
Որ նոր օր է իր հետ բերում,
Այն հեռացող մայրամուտը,
Որ նոր օրվա հետքն է մաքրում,
Այմ մթասույզ գիշերները,
Ուր աստղերն են շուրջպար հյուսում:

Ես սիրում եմ: Էլ ի՞նչ ասեմ:
Վերջում միայն կավելացնեմ,
Որ սիրում եմ, չէ՛ պաշտում եմ,
Այն հրեշտակ սուրբ նորածնին,
Ում հայացքում Աստծո շունչն է,
Սրտում նոր կյանք, ներսում՝ բարին:

Ես սիրում եմ...

Հեղինակ՝
**Աննա Անդրեասյան**

Բանաստեղծությունը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի շրջանակներում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/05/anna-andreasyan-i-love-poem/

**ՀՌԻՓՍԻՄԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**. Ծնվել է 1985 թ. սեպտեմբերի 15-ին, Շիրակի մարզի Կրաշեն գյուղում: Կրթությունը ստացել է Կրաշենի դպրոցում, ավարտել է 2002 թ.-ին: 2011-2013 թթ. սովորել է Գյումրու պետական մանկավարժական քոլեջում, բանասիրական բաժնում: 2013-2017 թթ. սովորել է Գյումրու Պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի բանասիրական բաժնում: 2013 թ. աշխատել է Երևանի Անանիա Շիրակացու ճեմարանի «Հեքիաթ» ճամբարում՝ որպես ջոկատավար: 2016 թ. աշխատել է «Վիվասել-ՄՏՍ»-ի Գյումրու մասնաճյուղի հաճախորդների սպասարկման բաժնում: 2016 թ.-ին աշխատել է նաև «Կոմպաս» գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն հասարակական կազմակերպությունում՝ որպես հարցազրուցավար և մոնիտորինգ իրականացնող (Գյումրի քաղաքի լուսավորության ու աղբահանության վերաբերյալ): 2013 թ.-ին կամավոր է եղել «Կանայք հանուն զարգացման» հասարակական կազմակերպությունում: 2015 թ.-ին կամավոր է եղել «Նոր լույս» Մենթորինգ կենտրոն երիտասարդների համար հասարակական կազմակերպությունում:

Սիրում է կարդալ գրքեր, լսել դասական երաժշտություն, մասնակցել արշավների և արհեստական ծաղիկներ պատրաստել:

Էլ. փոստ՝ hripsime.petrosyan.1985@mail.ru

## ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՇԱԳԵՂ Է

Բնությունը հրաշագեղ է, բնությունը հրաշագործ է, ամեն անգամ երբ ես տխուր եմ լինում, հոգնած ու հիասթափված մարդկային չարությունից, անգթությունից, նախանձից, ատելությունից ու անարդարությունից, երբ հույսս ու հավատս կորում է, երբ ուժերս դավաճանում են ու լքում են ինձ միակ սպեղանի ու հուսադրող, հույս ու նոր ուժ պարգևողն ու տվողը Մայր բնությունն է: Ամեն անգամ խորհրդի ու նորից ապրելու, պայքարելու ու մաքառելու համար գնում եմ նրա մոտ, գնում եմ անտառ, նստում եմ կանաչ ու անարատ խոտին, նայում եմ շուրջբոլորս ու պատմում եմ նրանց հատիկ առ հատիկ դարդերս ու ցավերս, մնում ենք ես ու բնությունը, ապա այլևս կարիք չունեմ զսպելու արցունքներս, նրանք կաթիլ առ կաթիլ թափվում են, մաքրելով հոգումս կուտակված վրդովմունքն, վիրավորանքն ու ցավը, գալիս է այդ պահին զով քամին սրբելու արցունքներս, անտառը մեղմիկ խշշում է, ծառերի սվսվոցը խառնվում է հեռվից գալացող գետի ձայնին, նրանք պատմում են իրենց անցած ուղղին, անտառի մի ծառ ասում է.

– Տեսնո՞ւմ ես կոտրված ճյուղերս, այս ճյուղերիս վրա ես խնձոր էի աճեցնում մարդկանց համար, որպեսզի նրանք օգտվեն իմ բերքից ու բարիքից, իսկ գիտես ինչպես վարվեցին նրանք ինձ հետ, խնձորներիս հետ, պոկեցին դրանք, պոկեցին նաև իմ տերևները և դա դեռ քիչ էր նրանց համար, նրանք նույնիսկ կոտրեցին ճյուղերս, դրանք իմ թևերն էին, և փոխարեն մեծերը երեխաների մեջ փոքր հասակից սերմանեն պահել ու պահպանել, խնամել մեզ, քանի որ մենք նրանց օդ ենք տալիս, հնարավորություն շնչելու և ապրելու, ընդհակառակը նրանք երեխաների հետ պոկում են, կոտրում ու ցավեցնում ինձ, մի հատ կծում են ու դեն նետում իմ բարիքները՝ խնձորներս, բայց տես ես կանգուն եմ նորից, նոր ճյուղեր եմ տվել նորից պայքարում եմ, մաքառում եմ, չեմ հանձնվում: Կյանքը պայքար է, պիտի պայքարես, որ ապրես: Խնդրում եմ, գնա ու փոխանցիր մարդկանց, թող խնամքով վարվեն մեզ հետ, իրենք չեն կարող առանց մեզ, կգա մի օր ու մեզ չեն գտնի այլևս, նոր սերունդները էլ չեն տեսնի

մեզ, թթվածնի քաղց կսկվի, օդի պակաս, նրանք կխեղդվեն, գնա ու ասա մարդկանց, թող հոգ տանեն մեզ, խնամքով վարվեն մեզ հետ ու խնայեն, չկտրեն սուր կացիններով ու կրակին չտան մեզ, խնամքով վարվեն մեր բերքի հետ, անսպառ ոչինչ չկա այս կյանքում...

Ծառը դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ մի քնքուշ ու քաղցրիկ ձայն լսվեց ներքևից.

– Իսկ մենք ծաղիկներս ինչ ասենք, երբ մենք աճում ենք մայր հողից, դուրս գալիս տարածելով մեր անուշ բույրը, ի ցույց ենք դնում մեր ամբողջը հմայքը մարդկությանն, մենք բոլորս տարբեր ենք յուրովի, ոչ մեկս նման չենք իրար, եթե անգամ նույն ազգակցական կապն ունենք, միևնույն է տարբերվում ենք չափ-սերով, գույներով, բույրերով, մեր առաքելությունն է զարգացնել գեղագիտական ճաշակ մարդկանց մեջ, զարգացնել նրանց մեջ գեղեցկության հանդեպ սեր, հիացմունք, բայց գիտե՞ք ինչպես են վարվում մեզ հետ մարդիկ, նրանցից շատերը քայլում եմ մեր վրայով, այո, այո, ասածիս բուն իմաստով ճզմում են մեզ իրենց կրունկների տակ՝ չնկատելով ու չլսելով մեզ, չհիանալով մեր գեղեցկությամբ, այնպես ծանր է ու ցավալի դա մեզ համար, ա-ռավել ծանր ու ցավալի է նաև այն փաստը, երբ մեզ են մոտե-նում, իբրև թե հիանում են մեզանով, հոտ են քաշում, ծաղկե-փունջ կազմում, իրար նվիրում, իսկ ինչ է ունենում մեր հետ հետագայում, շատ հաճախ մոռանում են մեզ մեքենաների մեջ և այլուր, պոկելով մայր հողից, մեր տնից, մեր արմատներից, մո-ռանում են մեզ, վայելում են ու հիանում մեզանով մի քանի ակնթարթ, ու մոռանում են անգամ ջրի մեջ դնեն, որ մի քիչ էլ ապրենք, մի քիչ էլ վայելենք մեր գեղեցկությունը, բնությունը մի քիչ էլ ավել զգա մեր ներկայությունը, միթե դա շատ դժվար է, դնել մեզ ջրով լի ամանի մեջ, որպեսզի մենք չջրազրկվենք, չչորանանք ու մահանանք ծարավ, պոկված, վիրավորված, տնից-տեղից հեռու: Կարող ես հարցնես մարդկանց, թե ինչու են նրանք այդպես վարվում, ինչու են այդքան անգութ, ինչու են տրորում, աննպատակ պոկում մեր թերթիկները, մեզ ու հետո դեն նետում, դա նույնն է, ինչ գնաս աղջկան սեր խոստովանես, սովորեցնես սիրել, հետո թողնես նրան մենակ, առանց քեզ ու

հեռանաս… Ծաղիկը խոսքը կիսատ թողեց, չէր կարող այլևս խոսել, ցողը կաթիլ առ կաթիլ թափվում էր նրա թերթիկներից ու խառնվում պապակ հողին:

Վաշ-վիշ, Վաշ-վիշ լսվեց շատ հեռվից գետի վշտացած ձայնը.

– Դուք Ձերն եք պատմում, իսկ ես ինչ ասեմ, ցավերս ո՞ւմ տամ, ո՞ւմ հետ կիսեմ, տեսնո՞ւմ եք՝ ինչքան եմ պակասել ու նվազել, գիտե՞ք, թե ինչու, անխնա ու առանց ափսոսանքի ու ցավալու պատճառով, տեսնում եք մարդիկ ցայտաղբյուրներ, աղբյուրներ են կառուցել, որ միշտ ջուր ունենան խմելու, զովանալու, և այն միշտ բաց է, բայց կարող են չէ՞ նաև փակ պահել, խմեցին լավ արեցին, թող անուշ լինի, հետո փակեն, որ անիմաստ չթափվի ու կորսվի, անվերջ ու անսպառ ոչինչ չկա, տեսնում ես նվազում ու պակասում եմ օր-օրի, մի օր էլ գուցե ամբողջովին սպառվեմ: Գետ եմ, գետ հարյուր քարի ու ժայռի դեմ եմ պայքարում, մաքառում ճամփես հարթելու գնալու պապակ հողին, ծառ ու ծաղկին հովացնելու, զովացնելու, բերում են ինչքան աղբ կա լցնում են մեջս, ուր տանեմ, որ անարատ դաշտերն ու այգիները չապականեմ, չաղտոտեմ դրանով, ինչո՞ւ են այդքան անտարբեր ու եսասեր մարդիկ, ինչո՞ւ հոգ չեն տանում սեփական բարօրության ու առողջության մասին, ինչքան բաներ կարող են սովորել, ընդօրինակել մեզանից, օրինակ՝ լինել ուժեղ, միշտ պայքարել իրենց նպատակների մասին, ձգտել ու հասնել, երբեք չընկճվել ու չկոտրվել, եթե անգամ կոտրում էլ են, միշտ երազել, մաքուր ու անարատ պահել սիրտն ու հոգին բնության պես, թույլ չտան սրտում ատելության ու նախանձի սերմեր աճեն: Տեսնո՞ւմ ես այնտեղ խոտեր կան, տեսնո՞ւմ ես տակից չորացած խոտեր են երևում, բայց մի զարմացիր նրանց տեղում նորերն են աճել, դու էլ այդպես վարվիր, վիրավորանքդ ու ցավդ դիր կողքի, լցվիր նոր հույսով, ուժով, ամուր կանգնիր հայրենի հողի անսասան ու առաջ գնա, գնա առաջ, պայքարի՛ր, պայքարի՛ր քանի կաս, ապրում ես, զգում ես, տեսնում ես, հնարավորություն ունես վայելելու կյանքի բերկրանքն ու քաղցրությունը, թող դառնություններն քեզ չվախեցնեն, դրանք դասեր են, դրանք ավելի ուժեղ կարող են քեզ դարձնել, գնա և ապրիր, վայելիր կյանքը, ամեն րոպեն,

վայրկյանը, քանի կաս ապրում ես, շնչում, հետո արդեն ուշ կլինի, էլ հնարավորություն չես ունենա, էլ չես լինի դու: Ապրի՛ր ու ոչ մի բանի համար մի՛ ափսոսա, մեր պատմություններն ու խորհուրդներն էլ պատմիր մարդկանց, թող իրենք էլ իմանան:

Կյանքով, սիրով լեցուն վեր կացա տեղիցս, սրբեցի արցունքներս ու ժպտացի:

Հեղինակ՝
**Հռիփսիմե Պետրոսյան**

Պատմվածքը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի շրջանակներում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/13/hripsime-petrosyan-bnutyuny-hrashagegh-e/

**ԱՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ**. Ծնվել է 1994թ. հուլիսի 23-ին, Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Ույծ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 2009թ.-ին ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: Ուսումը շարունակել է Երևանի թիվ 198 ավագ դպրոցում, իսկ 2011թ. ընդունվել է Գառնիի Ատոմի անվան՝ թիվ 2 ավագ դպրոց: 2012 թ.-ին, ավարտելով դպրոցը, զբաղվել է դիզայներությամբ, համատեղ նաև՝ գրականությամբ:



Էլ. փոստ՝ arminepoghosyan1994@gmail.com

## ԲՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԵՐ

Ուզում եմ ասել այսօր երկու խոսք՝
Իմ սրտից բխած՝ անգութ այս մարդկանց,
Որ տանջում է ինձ երկար տարիներ և խեղաթյուրում իմ մաքուր հոգին:
Դո՛ւք, որ անխնա վերացնում եք ինձ,
Պայքարում եք իմ ու ձեր կյանքի դեմ,
Դո՛ւք, ավիրում եք ամեն գեղեցիկ,
Ամեն գրավիչ բնության մասնիկ,
Եվ փոխարենը կառուցում շենքեր,
Օդը պղտորող մեծ գործարաններ:
Դո՛ւք, կործանում եք ձեր շուրջն ամեն բան,
Իսկ ես՝ հնազանդ, դեռ հետևում եմ,
Հետևում եմ ձեր անկուշտ պահվածքին:
Դո՛ւք, վերացնելով իմ հրաշքները,
Դեռ լույս չտեսած շիվերն իմ անմեղ,
Հավերժ թաղում եք նրանց իմ հողում,
Եվ գազանորեն թողնում եք մթում:
Հետո էլ անմեղ հայացք ընդունում,
Կարծես մի բան էլ ես եմ նեղացնում,
Երբ բարկանում եմ, շենքեր շուռ տալիս,
Օվկիանոսներ եմ հանում ափերից
Ու փոթորիկներ սարքում հուզմունքից:
Ես պարտավոր չեմ հանդուրժել ձեր պիղծ,
Անտաշ ձեռքերով աշխարհը ստեղծած:
Ես պահանջում եմ վե՛րջ տվեք, մարդի՛կ,
Խնայեք և՛ ինձ, և՛ ձեր կարճ կյանքը:

Հեղինակ՝
**Արմինե Պողոսյան**

Բանաստեղծությունը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի շրջանակներում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/04/armine-poghosyan-bnutyan-khosqer-poem/

**ՆԱԻՐԵ ՍԱՀԱԿՅԱՆ**. Ծնվել է Երևան քաղաքում, 1991 թ.-ին: Ունի 2 մասնագիտություն՝ բնապահպան և կենսաբան: Մասնագիտական լուրջ քայլերը սկսել է «Civil Voice» հասարակական կազմակերպությունում:

Սիրում է ուսումնասիրել, դիտարկել բնության հետ կապված ամեն ինչ և պարզապես լինել բնության գրկում: Անչափ հետաքրքրվում է հնէաբանությամբ և Հայաստանի հարուստ պատմությամբ:

Նվիրական երազանքը Արևելյան և Արևմտյան Հայաստանների միացումն է:

Հաճախ հոգնած առօրյա աղմուկից, մեքենաների ձայներից, արտանետումներից, ուրբանիզացված քաղաքներից, երբ այդ ամենը ուղղակիորեն ազդում է իր ինքնազգացողության վրա, ակամայից փնտրում է բնության մի անկյուն, որտեղ գտնում է ինքն իրեն:

Ահա և այդ ամենից ծնվեց իր բանաստեղծությունը՝ «Անկեղծ ասած ես հոգնել եմ...» վերնագրով: Ըստ հեղինակի՝ պարզ, հասարակ բառերի մի շարան, որտեղ բառերը ծնվում էին իր սրտից:

Էլ. փոստ՝ naire.sahakyan@mail.ru

## ԱՆԿԵՂԾ ԱՍԱԾ, ԵՍ ՀՈԳՆԵԼ ԵՄ…

Անկեղծ ասած, ես հոգնել եմ…
Այնպես հոգնել, քաղաքային այս աղմուկից,
Անց ու դարձից, այս ձայներից, եռ ու զեռից:
Ես հոգնել եմ, անկեղծ հոգնել…
Ու ձանձրացել ամեն ինչից…
Ամենուրեք վեհ շինություն,
Ճանապարհներ՝ նեղ ու երկար,
Ավտոշքերթ՝ անհերթ, արագ,
Հերթ չեն տալիս, թե՛ ինձ, թե՛ քեզ…
Ես հոգնել եմ այս ամենից,
Թե՛ աղմուկից, թե՛ ձայներից:
Կարծես հանգիստ է հոգիս փնտրում:
Ինչ-որ մի բան այն չի թվում:
Երբ խորհում եմ՝ հասկանում եմ,
Ես էլ մասն եմ այդ բնության:
Այնքա՜ն այլ են մտքերն այնտեղ,
Այնքան հանգիստ, այնքան հանդարտ:
Այնտեղ էլ են ձայներ գալիս,
Բայց տարբեր են ու շատ դյութիչ:
Այնտեղ էլ կան ճանապարհներ,
Բայց լեցուն են սաղարթներով,
Նեղ ու երկար տերևներով:
Ձայներ էլ կան շատ գեղեցիկ,
Թռչնաշխարհից՝ նուրբ ու թովիչ:
Մի տեսակ հանգիստ է, հանգիստ է հոգիդ:
Ներդաշնակ է, հանդարտություն:
Այնտեղ… այնտեղ է իմ հոգին ձգտում,
Քաղաքի աղմուկից փախչել է ուզում:

Հեղինակ՝
**Նաիրե Սահակյան**

Բանաստեղծությունը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի շրջանակներում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/13/naire-sahakyan-poem-entitled-ankeghts-asac-es-hognel-em/

**ՍՈՆԱ ՎԱՆՅԱՆ**. Ծնվել է 1992 թ.-ի օգոստոսի 14-ին, Լոռու մարզի Ալավերդի քաղաքում: Ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը:

Սոնան ստեղծագործում է դեռևս դպրոցական տարիներից: 2015 թ.-ին հիմնադրել է «Երիտասարդ գրողների գրական ակումբը» (ԵԳԳԱ): Տպագրվել է չորս համահավաք ժողովածուներում՝ «Սիրո հևքը գրչի ներքո» (հանդիսանում է գրքի հեղինակը), «Առողջ բնություն՝ առողջ ապագա», «Նուռ տարեգիրք», «Ինձ նման մարդիկ» (հանդիսանում է համահեղինակ և խմբագիր): Ստեղծագործում է և՛ արձակ, և՛ չափածո ժանրերում: Սոնան զբաղվում է ակտիվ գրական գործունեությամբ և ինչպես նշել է իր հարցազրույցներից մեկում. «Ստեղծագործելը հոգուս բարձրաձայնած ճիչն է, իմ էությունն է, աշխարհը ավելի վառ ու բարի դարձնելու հավատն է»:

Էլ. փոստ՝ sosmanyan@mail.ru

## ԵՂԵՎՆՈՒԿԸ

– Մա՛մ, այն ի՞նչ գործիք է այն քեռու ձեռքին,-փոքրիկ եղևնին էր, որ դեռ նոր-նոր էր կարողանում ոտքերի վրա կանգնել և տեսնել շուրջբոլորը՝ իր նման մեծ ու փոքր եղևնիներին, անտառի մյուս գեղեցկուհիներին: Նա շատ հետաքրքրասեր էր, ինչպես բոլոր այդ տարիքի երեխաները և իրենց ամենատարօրինակ հարցերով փորձում են մեծահասակներից ճշտել աշխարհում տեղի ունեցող տարատեսակ երևույթների պատմությունները և երբեմն էլ տալիս են այնպիսի հարցեր, որոնք երբեմն պատասխան չունեն:

– Փոքրի՛կ, այդ գործիքը կոչվում է սղոց, այն նախատեսված է փայտեր, ծառեր կտրելու համար,-պատասխանեց մայր եղևնին՝ չարաղետի գուշակումը աշխատելով ամեն կերպ վանել մտքերից:

– Իսկ ինչո՞ւ է նա այդպես նայում մեզ, մենք իրեն ի՞նչ ենք արել,-եղևնու ձագը դեռ շարունակում էր անհանգստանալ:

– Նա զմայլված նայում է մեզ, որովհետև ի տարբերություն անտառի մյուս բնակիչների մենք ամենագեղեցիկն ենք, թիկնեղ ենք, ու մշտականաչ,-կոտրված սրտին ժպիտե կերպար նկարեց և մայրական գորովագութ հայացքով գրկեց հետաքրքասեր զավակին, ասես նա զգում էր իր մոտալուտ վախճանը:

– Մայրի՛կ, նայի՛ր այն ատամնավոր, զզվելի գործիքը պահել են ինձ վրա, ես վախենում եմ, փրկի՛ր ինձ մայրի՛կ,-Եղևնուկի անպաշտպան ձայնը մորը թևաթափ արեց, նա շատ լավ գիտեր, որ եկող քեռիները ամենևին էլ բարի նպատակներ չունեն և չեն եկել իրենցով հիանալու:

– Փակի՛ր թևերդ, գլու՛խդ կախիր, աշխատի՛ր աննկատ մնալ,-խորհուրդ տվեց փորձառու Եղևնին և ինքը էլ ավելի փարթամ բացեց թևերը, բայց զգալով, որ մենակ անկարող է գայթակղել մարդկանց՝ օգնության կանչեց հին բարեկամ քամուն:

Ուժեղ քամի բարձրացավ և մայր Եղևնին ամբողջ մարմնով խոնարհվեց զավակի վրա՝ աշխատելով նրան պաշտպանել ցրտից և մարդկանց տեսադաշտից թաքցնել:

– Մրսում եմ մա՛մ,-Եղևնուկի ձայնը, գրեթե, չլսվեց, բայց տակնունվրա արեց մոր ներաշխարհը, նա գիտեր, որ հրաժեշտի պահը մոտ է և նրանցից մեկին տանելու են:

Երկու օր անց Ամանոր է, նրանք պետք է ուրախացնեն իրենց երեխաներին և բոլորովին չմտածեն այն մասին, որ իրենց այդ տոնի հյուրն էլ երեխա ունի, որին ուզում է իր աչքի առաջ մեծացնել, նրա հաջողություններով ուրախանալ:

– Այս փոքրիկը շատ անուշիկն է, Գեղա՛մ արի հենց սրան էլ կտրենք,-ասեց հաղթամարմին այն տղամարդը, որ կանգնած էր եղևնիներից մի քանի քայլ հեռու:

– Տե՛ս է փոքրիկ է, բայց ինչքա՜ն փայլուն ու թարմ են թևիկները, որ տանենք տուն երեխաներս շատ կուրախանան, մի քիչ էլ կզարդարենք կդառնա արքայադուստր,-փորձեց կատակել ընկերը և այնուամենայնիվ շարունակեց աչքերը պտտեցնել ան-տառով մեկ՝ ավելի հաջող զոհ գտնելու տենդագին տենչով և կողքին ընկերոջը չհանդիպելով անհանգստացած ձայնեց,-ու՞ր կորար Գեղա՛մ:

– Այստե՜ղ եմ, եմ… եմ…ե…մ…,-անտառով մեկ լսվեց Գեղա-մի արձագանքը, որը գլխարկն էր փնտրում ձյուների մեջ:

– Քեզ ի՞նչ եղավ այ եղբա՛յր, այդ ի՞նչ ես կորցրել,-նրան հասնելով մի կուշտ ծիծաղեց:

– Չեմ կորցրել, գտել եմ, գտել, ապա արի՛ տես ի՜նչ մեծ ու ամուր եղևնի է,-հիացած հայացքը մայր Եղևնուն հառելով խոսեց Գեղամը,-այս կողմերով անցա գլխարկս թևով տվեց-գցեց ու կարծես նշան լիներ, որ հենց իրեն տանենք:

– Դե իրեն էլ կտանենք, բե՛ր կտրենք,-գրեթե միաբերան ասեցին ընկերները և շտապ անցան գործի:

Մայր Եղևնուն կտրում էին իր մայր հողից, նա էլ չէր տեսնի այգաբացն ու մայրամուտը, չէր հանդիմանի կամակոր քամուն, չէր զարթնի արևի համբույրից, այլևս չէր տեսնի իր հարցասեր Եղևնուկին, որը նոր-նոր էր հասակ առել և փորձում էր ճանաչել զարմանահրաշ աշխարհը, ով կպատասխաներ նրա հարցերին, նրան ինչպե՞ս բացատրեր, որ արևաշող երկնքի տակ ապրող-ներն ամենևին էլ բարի ու սրտացավ մարդիկ չեն, կտրում և անխնա փչացնում են բնությունը, իսկ փոխարենը բնությունը առատորեն վարձատրում է նրանց: Ինչպե՞ս կարելի է մի քանի օրվա համար բնությունը թևատել, զրկել գեղեցկությունից և ամայացնել անտառը, այս ամենը դեռ ոչինչ, ինչպես կարելի է մորը զավակից բաժանել, զավակին մորից, ախ չէ՞ որ իրենք էլ իրենց ընտանիքներն ունեն, իրենք էլ ուրախանալ ու տխրել գիտեն, ցավ են զգում, լաց են լինում…

Տխուր մտքերի շրջապտույտը ընդմիջվելով մարմնի մոկտոցներին անասելի խոցում էին, սաստիկ ցավ պատճառում, բայց դիմանում էր, դիմանում էր, որովհետև դրանք այն վերջին վայրկյաններն էին, որ կարող է որդուց կարոտը առնել, բայց այս ցավը դեռ տանելի էր, ի՞նչ կլիներ իր վիճակը, եթե Եղևնուկին սղոցեին և հենց իր աչքի առաջ զավակին ուշաթափ տանեին անտառի փշոտ եզրերին քսելով դեռափթիթ աչքունքը:

Գեղեցիկ ու թանկ հիշողություններ կային այստեղ, այստեղ է արդեն յոթ տարի, շատ բան է տեսել, հազար փորձություն է գլխով անցել, բայց ոչ մեկը չես համեմատի մոր ու զավակի, բաժանման հետ, դա աններելի ու անտանելի կսկիծ է:

– Ո՞ւր ես գնում մա՛մ, ինչու՞ ես օրորվում, այս ի՞նչ ձայներ են գլուխս գնաց,-Եղևնուկը, որ փոքրիկ աչուկներով զննում էր

մե՛րթ տեղանքը, մե՛րթ այդ երկու տղաներին չէր հասկանում՝ ի՞նչ է կատարվում:

– Լռի՛ր Եղևնուկ, արդեն ուշ է քնի՛ր, փակի՛ր աչքերդ,-լսվեց մոր ծանր հևոցը, որը գուցե վերջին ճիչն էր մահից առաջ:

– Դու ինձ ասել ես, որ պետք է քնել այն ժամանակ, երբ արևը մայր է մտնում և գիշերը տարածում է իր սև թիկնոցը, հիմա դեռ ցերեկ է, ինչու՞ քնեմ,-զարմացած հայացքը վեր բարձրացրեց, բայց էլ պատասխան չստացավ, միայն այնտեղ աչքերը բացեց, երբ մայրը արդեն ընկել էր ուղիղ իր դիմաց, ընկել էր անօգնական ու անժպիտ:

Մարմինը անսովոր ջերմություն զգաց, փոքրիկ սիրտը կծկվեց և ասես վրայից ծանր-ծանր քարեր կախեցին, նա հետո հասկացավ, որ այդ ստացած ջերմությունը մոր վերջին համբույրն էր ու գրկախառնությունը հրաժեշտից առաջ…

Հեղինակ՝
**Սոնա Վանյան**

Պատմվածքը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի շրջանակներում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/18/sona-vanyan-eghevnuky-story/

## «ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

**ԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**. **«Հանուն Բնության» գրական մրցույթի հաղթող**: Մրցույթի օնլայն քվեարկության արդյունքներով զբաղեցրել է **պատվավոր** 1-**ին տեղը** (1540 ձայն):

**ԱՐՄԻՆԵ ՊՈՂՈՍՅԱՆ**. **«Հանուն Բնության» գրական մրցույթի հաղթող**: Մրցույթի օնլայն քվեարկության արդյունքներով զբաղեցրել է **պատվավոր** 2-**րդ տեղը** (1525 ձայն):

**ՍՈՆԱ ՎԱՆՅԱՆ**. **«Հանուն Բնության» գրական մրցույթի հաղթող**: Մրցույթի օնլայն քվեարկության արդյունքներով զբաղեցրել է **պատվավոր** 3-**րդ տեղը** (239 ձայն):

**ՆԱԻՐԵ ՍԱՀԱԿՅԱՆ**. **«Հանուն Բնության» գրական մրցույթի հաղթող**: Մրցույթի օնլայն քվեարկության արդյունքներով զբաղեցրել է 4-**րդ տեղը** (235 ձայն):

**ՀՌԻՓՍԻՄԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ**. **«Հանուն Բնության» գրական մրցույթի հաղթող**: Մրցույթի օնլայն քվեարկության արդյունքներով զբաղեցրել է 5-**րդ տեղը** (121 ձայն):

**ՄԱՐԻՆԵ ԱԲԳԱՐՅԱՆ**. **«Հանուն Բնության» գրական մրցույթի հաղթող**: Մրցույթի օնլայն քվեարկության արդյունքներով զբաղեցրել է 6-**րդ տեղը** (106 ձայն):

«Հանուն Բնության» գրական մրցույթ: © Բոլոր իրավունքները պաշտպանված են, 2017 թ.

# «ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» ԳՐԱԿԱՆ–ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

**Երևան**, «WWF-**Հայաստան**», 09.10.2017 **թ**.:

**Լուսանկարները՝**
**Ալեքսանդր Մալխասյանի** («WWF-**Հայաստան**»):

«Հանուն Բնության» գրական մրցույթ: © Բոլոր իրավունքները պաշտպանված են, 2017 թ.

WWF

WF

Մրցույթի հաղթողներին տրված պատվոգրերը:

*Ձախից՝ աջ.* «WWF-Հայաստանի» Համագործակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Հերմինե Հակոբյան, «WWF-Հայաստանի» տնօրեն Կարեն Մանվելյան, «Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի հաղթողներ՝ Նաիրե Սահակյան, Աննա Անդրեասյան, Սոնա Վանյան, Արմինե Պողոսյան, Հռիփսիմե Պետրոսյան, մրցույթի հեղինակ և կազմակերպիչ Առլեն Շահվերդյան:

«Հանուն Բնության» գրական–բնապահպանական մրցույթի հաղթողների հանդիպումը Նարեկացիագետ Սամվել Պողոսյանի հետ:

Երևան, «Պողոսյան պարտեզներ», 09.10.2017 թ.:

# «ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ» ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՍՏԱՑՎԱԾ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ Ի ՄԵԾԱՐՈՒՄՆ ԲՆՈՒԹՅԱՆԸ

**Ըստ՝ հեղինակների ազգանունների այբբենական կարգի**

**ՏԱԼԻԹԱ (ԱԼԲԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ)**. Ծնվել է 1986թ. ապրիլի 25-ին, Բաքվում: Երկու տարեկան էր, երբ Սումգայիթյան ջարդերից հետո, գաղթող հայ ընտանիքների պես, իր ընտանիքն էլ գաղթեց Հայաստան, վերաբնակվելով Արարատի մարզի, Մասիսի շրջանի Հայանիստ գյուղում:

1992-2002 թթ. կրթությունը ստացել է տեղի միջնակարգ դպրոցում: 2002-2006 թթ. ուսումը շարունակել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ստեղծագործելու առաջին փորձը 8-ամյա տարիքում էր, պարբերաբար սկսել է գրել 12 տարեկանում: Ոտանավորները երկու թեմաներով էին միշտ՝ Աստված և Հայրենիք: 13 տարեկանից հետո՝ սեր: Առաջին անգամ Տալիթայի ստեղծագործությունները տպագրվել են համալսարանի «Փյունիկ» ամսաթերթում, այնուհետև հաճախ տպագրվել է «Հոգու Ճիչ» ամսագրում: Հայրենիքի թեմային նա անդրադարձավ ինքնաբերաբար: 2016 թ.-ի ապրիլյան քառօրյա պատերազմի օրերից մեկ ամիս անց, ի հիշատակ զոհված հերոսների, ձայնագրեց հեղինակային «Լռության րոպեներ» ժողովածուի ստեղծագործությունները՝ ասմունքի տարբերակով: 2017 թ.-ի ապրիլին լույս տեսավ Տալիթայի առաջին գիրքը՝ երկու ժողովածուով՝ «Լռության րոպեներ», «Խնկաբույր ժամեր»:

Էլ. փոստ՝ talita.86@mail.ru

## ՄԱՅՐ-ՑԱՄԱՔ

Ա.
Եվ լուսացավ օրը երկրորդ:
Լռության մեջ մեղեդի կար,
Որ անղողանջ հնչեղությամբ,
Ալիքվում էր ջրերում հորդ...

Հողը ջրից մերկացել էր,
Աղջկական ստինքները բաց,
Արբունքի մեջ հասունացած,
Պատրաստվում էր սիրվել, սիրել:

Կենսավարար սերը հոսող,
Որ շրջում էր լույսով արար,
Կենսաուժով ճաճանչավառ,
Ընդգրկել էր ցամաք ու ծով,

Եվ ընդերքը նրան զգում էր,
Երբ հանդիպման պահը հասավ,
Սիրո ժամն էր նախասահման,
Երբ չկային ժամանակներ:

Բ.
Իսկ կիսամերկ հողի կողքին,
Ծովը՝ հագուստ աղջկական,
Ծփծփում էր ծածան-ծածան,
Եվ կանչում էր փեսացուին:

Օդը լի էր լույսով մաքուր,
Բջիջներով իր արական,
Որոնումով զուգավորման՝
Մերձեցման տաք զգացողություն:

Օդը՝ հասուն մի պատանի,
Ծովի բույրից գտավ նրան,
Սահեց, իջավ ձգողությամբ,
Դեպի հարսը իր գեղանի:

Իսկ ցամաքն էր խոնավ ու մուգ.
Աչքերն էին օդի չքնաղ,
Որ տեսիլքով նրան տեսավ,
Տեսավ հազար երանգներում:

Գ.
Երկնավկա հարսանքատոն՝
Առանց երդման, առանց խոստման,
Խորհրդավոր ու կենսարար,
Հուզումներով բնականոն:

Փարվեց նրան օդը թեթև,
Որ դեռ չուներ արտաշնչանք,
Թթվածնային տարածությամբ
Ցամաք ու ծով գրկում պահեց:

Սիրահոժար և ընդունող
Եվ բնույթով իր հնազանդ՝
Բնահողը տրվեց նրան,
Այն միակին իրեն գրկող:

Մինչ ընդերքը նրան շնչեց.
Եվ հառաչը երկինք հասավ,
Տարածքներում անեզրության
Արտաշնչանքն արձագանքեց:

Դ.
Երկուսն էին՝ և միասին,
Ցողերի մեջ ծովից հասած,
Տարփանքների վայեքն առած,
Եվ մերձ էին և միասին:

Երկուսն էին, երկրորդ օրում,
Անեղծ սիրով առանց խոստման,
Հիացմունքով հավերժական,
Արարչագործ լույսի ներսում.

Եվ երազներ տեսիլվեցին,
Երկնաշխարհի բնաերանգ
Շքեղ սիրո արտահայտմամբ.
Եվ միասին հավատացին:

Շնչառություն–արտաշնչում…
Անրջային սիրո հեշտանք՝
Բուռն հույզերի զգացողությամբ.
Գրգիռներով կենսաբնույթ:

Ե.
Եվ զույգվեցին ցամաք ու օդ:
Թթվածնից լուսաշաղախ
Բնահողը հղիացավ,
Մինչ արարման օրը երրորդ:

Ալեհնչուն երեկո էր…
Երբ մայրացման վեհ բերկրությամբ,
Օրհներգություն երկինք հասավ…
Բնահողը մայրանում էր:

Փխրուն հողում՝ երկունքի դող,
Գոլորշի էր քրտինքը պաղ,
Լույսն էր հսկում ամենարար,
Մայրացումին կենսահաղորդ:

Տամուկ հողում կային սերմեր՝
Թթվածնաժայթք, երկնաառաք,
Եվ ներուժով ամենահաղթ,
Ձգտում էին լույսը գտնել:

Զ.
Ծիլեր ելան ընդերքներից,
Նո՛ւրբ, թավշային կանա՛չ-կանա՛չ,
Ծիլեր՝ տարբեր և անճանաչ,
Ծիլեր՝ սիրուց երազային:

Եվ ցորենն էր հասունանում,
Որ նախասկիզբ և նախահաց
Պիտի հետո դառնա… անանց
Կենսաարժեքն է մարմնագույն:

Եվ ծառերը ծիլ տվեցին,
Եվ ծաղիկներ եղեմական,
Բազմահազար, բազմաքանակ,
Մայր բնության կենսարգանդից.

Եկավ ժամը առավոտի,
Օրն էր երրորդ, որ լուսացավ.
Բնությունն էր սիրազավակ,
Անդրանիկը մայր-ցամաքի:

Հեղինակ՝
**Տալիթա**
(Ալբինա Գրիգորյան)

*24.09.2017 թ.*

Բանաստեղծությունը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի արտամրցութային ստեղծագործությունների շարքում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/25/talita-mayr-camaq-poem/

**ԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**. Ծնվել է 1985 թ., Գյումրիում: Սովորել է Գյումրու Մեծարենցի անվան թիվ մեկ դպրոցում: 2001 թ.-ին տեղափոխվել է Երևան: 2002 թ.-ին ընդունվել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան Պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի հեռուստալրագրողական բաժինը: Բուհն ավարտել է 2007 թվականին: Ունի լրագրողական աշխատանքի փորձ, մասնավորապես՝ աշխատել է «Այսօր.am» տեղեկատվական կայքում: Անին ստեղծագործում է երկար ժամանակ, արդեն ունի գրած մոտ 500 բանաստեղծություն, հիմնականում՝ սիրային բովանդակությամբ:

Էլ. փոստ՝ annikhachatryan32@gmail.com

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ ՀՈԳԻՆ ՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Երբ ներդաշնակ են բնությունն ու ստեղծագործ միտքը, կարծում եմ արարումն հասնում է արարչագործության, օրհնվում է Աստծո կողմից ու հասնում է կատարելության: Ինձ թվում է, որ կարևոր չէ, թե ստեղծագործությունն որքան շատ մարդկանց հավանության արժանանա, քանի որ հաճախ այնքան, տողատակեր կան, որոնք ոչ մեկը չի տեսնում, չի տեսնում ստեղծագործողի հոգին ու բնությունը: Դա նաև այն իրողությունից է, որ մարդիկ դադարել են ապրել, տեսնել բնության հրաշալիքները, ինչպես նաև մարդուն, առավել ևս՝ ստեղծագործ մարդուն, նրա ստեղծագործությունները: Սակայն ստեղծագործելը մեծ տիեզերք է, այն Աստծո օրհնանք է, ես այդպես եմ համարում, երբ շարվում են տողերը հոգուց, երբ այն չես կրկնօրինակում, ինչպես չի կարելի կրկնօրինակել բնությանը: Ստեղծագործությունն էլ պետք է լինի եզակի, այնտեղ մշտապես պետք է տեսնել բնության, մարդու, Աստծո ու տիեզերքի առկայությունը: Ներշնչանքն ու ներդաշնակությունը պետք է երաժշտության նման ուղեկցեն ստեղծագործողին և փոխլրացնեն միմյանց: Սակայն ամենից կարևորը, ըստ իս, ոչ թե պատրաստի ստեղծագործությունն է, այլ այն, թե ինչպե՞ս է այն ծնվում, ի՞նչ հոգով ու մոտեցումով է արարվում, ինչպե՞ս է կյանք առնում, թե չէ պարզապես ուղղակի ստեղծել, հետո բազմացնել, հավանել... այս ամենը բնության հետ աղերս չունի, այս ամենը աղճատում է հենց բնությունից: Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ, ընդհանրապես՝ բնության մեջ մշտապես պետք է փնտրել ու տեսնել հոգին: Ահա, հենց այստեղ եմ տեսնում բնության, ստեղծագործողի ու ստեղծագործության կապը և ներդաշնակությունը: Կարծում եմ, որ եթե ընթերցողն անգամ չունի իր հոգում այդ անարատ ու կարևոր կապը, ապա գոնե ստեղծագործողը պետք է կրի իր հոգում բնության ու հոգու ներդաշնակությունը: Պարզ, կանաչ բնությունը արվեստի համար իսկական ներշնչանքի աղբյուր է և այդ անարատ բնականը յուրաքանչյուր մարդու կյանքի անքակտելի ու կարևոր մաս պետք է կազմի, որպեսզի պահպանվի մարդ արարածի կյանքի որակն ու ներդաշնակությունը բնության հետ, կյանքի հետ, աշխարհի հետ:

Միգուցե, շատ դժվար է բացատրել, թե ինչո՞ւ է ստեղծագործողի հոգուն այդքան անհրաժեշտ ներդաշնակությունն այն կյանքի հետ, որում նա ապրում է, այն բնության հետ, որից նա սերել է և, վերջապես, ինքն իր հետ: Սակայն, ի վերջո, այս ամենի գիտակցումն ու անհրաժեշտությունը հիմնավորվում է նրանում, որ կապը բնության հետ կենսական է, որ կապն Աստծո, տիեզերքի հետ նվիրական է ու կարևոր, որպեսզի ստեղծագործողը կարողանա արարել, ստեղծել պիտանի ստեղծագործություն, ասի իր սեփական խոսքը, ունենա սեփական ասելիքը: Ուրիշի ասելիքի յուրացմամբ ու վերարտադրմամբ արվեստ չի զարգանում, կյանքն առաջ չի գնում, զարգացում չի կարող ապրել ո՛չ գրականությունը, ոչ արվեստը: Արվեստին, գրականությանը պետք է մոտենալ մաքուր ձեռքերով ու մաքուր խղճով, անհրաժեշտ է, որպեսզի ստեղծագործողն ունենա մաքուր հոգի, իսկ այս անմաքուր աշխարհում մաքուր հոգի կարող է շնորհել միայն Աստծո ստեղծած մաքուր բնությունը, որը կարող է պարգևել թարմ միտք, նոր ասելիք, ոչ թե կարծրացած մտահղացումներ: Պետք է լսել բնության ձայնը, ահա ինչու է անհրաժեշտ բնության հետ ներդաշնակ լինելը, իսկ բնությունը դարեր շարունակ ներշնչանքի աղբյուր է հանդիսացել արվեստի համար: Ահա այն ներդաշնակության բանալին, որին պետք է ձգտի յուրաքանչյուր ստեղծագործող, ահա այն բանաձևը, որով նա պետք է առաջնորդվի. յուրաքանչյուր ստեղծագործող պետք է իր մեջ ստեղծի այդ ներդաշնակ աշխարհը:

Հեղինակ՝
**Անի Խաչատրյան**

Արձակ ստեղծագործությունը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգ-կայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի արտամրցութային ստեղծագործությունների շարքում: Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/26/ani-khachatryan-steghtsagortsoghi-hogin-u-bnutyuny/

**ԿԱՐԻՆԵ ՓԱՆՈՍՅԱՆ**. Ծնվել է 1984 թ.-ին Լիբանանից գաղթած բնիկ մուսալեռցիների ընտանիքում: Մեծացել է մուսալեռցիների միջավայրում, ուր խոսում էին մաքուր կիլիկիո բարբառով, ինչը նրա կյանքում լուրջ ազդեցություն է թողել և՛ բարոյահոգեբանական տեսանկյունից, և՛ աշխարհայացքի ձևավորման առումով: 4-5 տարեկանում նա սկսել է նկարել, 8 տարեկանում՝ գրել: Դեռ դպրոցական տարիներին, մասնակցելով ու հաղթելով շարադրությունների մրցույթում, հրավիրվել է «Կանչ» մանկապատանեկան շաբաթաթերթին կից գործող «Շավիղ» պատանեկան լրագրության դպրոց: «Կանչում» աշխատելու տարիներին՝ 2001-2004 թթ., ստացել է մրցանակ, որպես տարվա լավագույն պատանի հրապարակախոս: 2001 թ.-ին, դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, ընդունվել է Մոսկվայի Ինֆորմատիկայի և վիճակագրության համալսարանի Իրավագիտության ֆակուլտետ, 2007 թ.-ին՝ Երևանի պետական համալսարանի Ռոմանագերմանական ֆակուլտետի մագիստրատուրա: Ավարտելոց հետո սկսել է գործունեություն ծավալել բնապահպանության ոլորտում՝ որպես կենդանասեր, ակտիվիստ, դարձել է մի շարք կազմակերպությունների անդամ ու կամավոր, բազմաթիվ նախաձեռնությունների մասնակից, կազմակերպիչ, հեղինակ: Թեև ակտիվ հասարակական կյանքին՝ Կարինեն չի դադարում ստեղծագործել, նկարում է, գրում, գործում հելունով ու շյուղերով, ուսումնասիրում է ազգային մշակույթի ծեսերն ու սովորույթները, նաև քայլեր անում՝ դրանք վերածնելու, հասարակական կյանք ներմուծելու ուղղությամբ: Սիրում է կրել տարազների մոտիվներով կարված հեղինակային հագուստներ, իսկ միջոցառումների ժամանակ տարբեր գավառների տարազներ:

Էլ. փոստ՝ karine.panosian.am@gmail.com

## ՄԱՀԱՑՈՂ ԱՆՏԱՌՆԵՐ

Մեր մեքենան կանգ առավ «Լոռի» հանգստյան տան մոտ: Ճանապարհը, որ մինչ այժմ խելահեղ խաղերով շոյում էր աչքերս, խոստանում էր բուռն ու արկածալի երկու անհավանական օր: Բայց ամեն ինչ ավելի տաք էր լինելու, քան կարող էր պայծառ երևակայությունս ենթադրել:

Ես ու ընկերներս՝ Վահրամն ու Արմենը, սկսեցինք բարձրանալ լանջն ի վեր: Մեր ոտքերի տակ մահացող տերևների հոգոցն էր մարում, իսկ գլխավերևում արևն ու քամին տերևաթափի մասունքներից վարագույր էին ծածանում:

Ճանապարհն անցնում էր՝ ոչ վաղ անցյալում խիտ անտառի սպիերի միջով: Աջ կողմում ձորն էր, որ միլիոնավոր տարիների ընթացքում առաջացել էր գետակի համառության հաշվին, իսկ ձախ կողմում՝ անտառը, կամ դրա մնացորդը: Շատ չէինք բարձրացել, ընդամենը հարյուր մետր, իսկ առաջին հատատեղին հենց ճանապարհին էր, որը բացվել էր ծառասպանդի համար: Այդ ճանապարհը չէր կարող բահով փորված լինել: Այն բավականին դժվարանցանելի էր:

Կանգ առանք առաջին հատատեղին զննելու: Ամեն ինչ պարզ էր կես ակնթարթից՝ ապօրինի ծառհատումներ են: Ոչ մի նշան, ոչ մի ակնարկ, որ դա թույլատրելի սահմաններում է արվել, լանջի տեքությունը բավական էր, որպեսզի այլ հետախուզական քայլ չարվի:

Այսպես գնացինք-գնացինք՝ անընդմեջ հանդիպելով նույն իրավիճակին, հաստաբուն ու հսկա ծառերի աճյուններին բախվելով ու սարսռելով, ինչը հազար անգամ ավելի սարսափելի էին, քան մասրենիների հանդուգն խայթոցները: Շուտով ճանապարհը դարձավ անանցանելի, սակայն անանցանելի՝ մեզ համար, բայց ոչ, ավաղ, ծառագողերի: Նրանք հասել էին ամենահեռավոր ու խրթին լանջերն ու իրենց հետքը թողել նեխած գերանների մնացորդների տեսքով:

Հասել էինք մի բարդագույն հատվածի, որից առաջ անցնել չէինք կարող: Ընկերներս՝ Վահրամն ու Արմենը, որ ինձ կատակով կոչում էին «անհույս քաղաքացի», երբեմն ինձ խնայելու

որոշումներ էին կայացնում՝ հասկանալով, որ չեմ կարող հաղթահարել այս կամ այն անցումը:

Վերադարձանք ձորակ, գետն անցնելուց կանգնեցի մի մեծ, բայց ճոճվող քարի վրա ու ընկա: Վնասվածքներ ստացա, բայց ինձ համոզեցի, որ պիտի խիզախորեն հաղթահարեմ: Այդպես սկսեցինք բարձրանալ դիմացի՝ առավել թեք (մոտ 50-60 C°) ու սայթաքուն լանջով, ուր մասրենիների փոխարեն մեր դեմ ճակատամարտի դուրս եկան եղինջները: Այս լանջն առանձնահատուկ էր իր սնկերի բազմազանությամբ: Սպիտակից սև, կապույտից վարդագույն, ամենաանհավատալի ձևերի, գույնի ու չափսերի սնկերի կայսրություններ էին, որոնցից յուրաքանչյուրն արժանի էր պատմություն դառնալու, բայց ոչ տեղն էր հարմար, ոչ մեր ժամանակն էր թույլ տալիս բոլորին մտապահել մեր նկարահանող սարքերի հիշողության պահոցում:

Այս լանջին նույնպես երկար դեգերել չէինք կարող: Վերադարձանք մեր սկզբնական կետին ու ճանապարհը շարունակեցինք բենզասղոցների ձայների ուղղությամբ, ուր մեզ սպասում էին թարմ հատված ծառերի հետքերն ու դրանք քողարկած ամենատարբեր տեսարանները: Ողջ օրվա ընթացքում մեր ականջին հասած սղոցի ձայները լռել էին, բայց ծառերի մորմոքը շարունակվում էր օդում ճոճվել թեփի բույրի դիմակով: Տեսարանն ամեն քայլափոխի կրկնվում էր՝ հատված հաստաբուն ծառեր, ճյուղերով, տերևներով ու հողով քողարկված բներ, ամենուր թափթփված հաստ ու բարակ ճյուղեր, որոնք, անհասկանալի պատճառներով, մնացել էին տարածքում:

Ողջ օրը մեզ հանդիպած տեսարանները երբեմն մեղմանում էին շրջապատող անտառային տեսարանների հիացնող տպավորություններից: Գույների մրջնանոցն այնպիսի ներդաշնակությամբ էր մխրճվել անտառային բովանդակության մեջ, որ թվում էր, թե բնությունը նկարիչներից է գողացել իր հմտություններն ու ստեղծել իրականությունից հեռու մի հորինված գեղանկար, որն արված է մարդու հոգին ու աչքը հմայքից կուրացնելու նպատակով:

Օրվա ավարտին՝ հոգնած ու մրսած, իրար շղթայված հակասական ու աններողամիտ զգացողություններից հետո հա-

սանք Դսեղ: Մեզ դիմավորեց հյուրատան տիրուհին: Ազնվական շարժուձևով, զուսպ պահվածքով ու մեղմ, կանացի տանտիկինն իր կացարանը հրամցրեց մեզ, որպես մեր ամենահարազատ ու սովորական կենավայր, ուր չկար ոչ մի օտարություն ու խորթություն: Հին օրերը հիշեցնող վառարանը ջերմ զգացողություններ էր առաջ բերում:

Առավոտյան խիստ համեղ նախաճաշից հետո պիտի շարունակեինք մեր ճամփորդությունը: Մեքենան, որը մեզ պիտի ուղեկցեր նպատակավայր, չուշացավ: Հետազատողների առաջին խմբին տանելուց հետո, մեքենան մեզ ուղղորդեց դեպի մեր խարսխավայր: Ճանապարհն անցնում էր ձորերի և լեռների գրկախառնության միջով, ուր գույների համբույրը կրքոտ սիրախաղ էր ցուցադրում: Նախորդ գիշերվա սուր տպավորություններից ու դրանց ազդեցությամբ խախտված քնից ոչ մի հետք չմնաց և դա հենց այդ չքնաղ տեսարանների շնորհիվ:

Բայց առջևում նոր արկածներ էին դարանակալել: Դեռ նպատակավայր չհասած ամեն կողմից լսվում էր բենզասղոցների ձայնը, և այն լրացվում էր մեքենաների ոռնոցներով: Ակնհայտ էր, որ մեզանից ոչ հեռու անտառասպաններն են գործում:

Հատեցինք գետը: Ճանապարհը թաց էր, իսկ մեքենաների հետքերը՝ թարմ: Սկսեցինք բարձրանալ անծանոթ լանջով, որը սակայն օտար չթվաց: Տեսարանն իր գեղեցկությամբ շնչահեղձության աստիճանի գեղեցիկ էր, այնքան գեղեցիկ, որքան նախորդ օրվա պատկերներն էին: Ամենուր սփռված լեռներից բուրող աշնան ուրույն ծխահոտն էր, որ հոգեցունց էր իր բոլոր տեսանկյուններով: Իրար մեջ ձուլված ծառերի գունախառնուրդը ծեփվել էր մառախուղի ուրվագծում պատսպարվող լեռնահյուսքերի մակերեսին ու ծիծաղում էր մարդկային պարզամտության վրա: Թվում էր, որ Երկիր մոլորակի բոլոր գույները խաչասերվել էին մեկ վերնագրի ներքո՝ որպես քնից առաջ մերկացող աստվածուհի, որը պարծենում է իր բոլոր բարեմասնություններով: Այդ ամենն այնպես է թմրեցնում, որ հատված ծառի կոճղը նմանվում է շիկացած շամփուրի, որով խոցում են ուղեղիդ մայր բջիջներն ու բռնանում խղճիդ վրա: Մտքում ուզում ես, որ բենզասղոցի տերը հայտնվի այն ծառի տեղում, որին

սպանում է նպատակասլաց կերպով, հայտնվի նրա տեղում և գիտակցի, զգա, թե դանդա՛ղ, սրտի ամենախորը լարերին հասնող աղերսագին ճռռոցով ինչպես է վայր ընկնում հաստաբուն մի գեղեցկուհի ու դղրդյունով ալիք բարձրացնում շուրջը: Այդ ալիքը, ասես, հասնում է մաշկիդ ու ապտակում, ինչպես ծնողն է ապտակում իր անարժան զավակին, որը չի կարողացել պահպանել որդիական պարտքը: Զգում ես այդ ամենն ու սառում: Ներսում գոյացող դատարկությունն այդ ցնցումից հետո լիովին իմաստազրկվում է, կյանքի բոլոր նպատակները վերածվում են գունատ ու տձև անգոյության: Ոտքերդ չեն շոշափում ճանապարհն ու թվում է, թե քայլում ես բթացնող փշերի վրայով, որոնք ավելի սուր լինել չեն կարող, քան մահացող ծառի հոգեվարքը: Սպանում են անտառը: Սպանում են, մինչ դու փորձում ես գնտել այն առվակը, որով կարող ես սնուցել նրա չորացող արմատները:

Այսպես բթացած քայլում էի: Տղաները չէին մոռանում պարբերաբար հարցնել, թե ինչպես եմ: Ես հերոսաբար հաղթահարում էի զայրույթս, վախս, նախորդ օրվա ընթացքում ստացած վնասվածքների ցավերը, որոնք գիտակցությանս ուժով խեղդում էի՝ հիշելով, որ իմ ցավն ավելի ուժգին չի կարող լինել ու անհանգստացնել, քան քիչ առաջ ինչ-որ մեկի ստամոքսի համար թղթի վերածվող բջիջավորի տառապանքը:

Անհույս ու գունատ հոգիս այդպես՝ ծառերի հետ կմեռներ, եթե փրկության չհասներ կարմրագույն, չարաճճի սկյուռը, որ մեր մոտեցող քայլերից վախեցած շտապեց հասնել իր բույնը: Որքա՛ն սիրուն էր այդ չարաճճի ցատկը, որն աչքիս առաջ քարացավ, որպես նախամարդու փորագրած ժայռապատկեր:

Հեղինակ՝
**Կարինե Փանոսյան**

Պատմվածքը ներկայացված է նաև «Արվեստասեր» ստեղծագործական բլոգկայքում՝ «Հանուն Բնության» գրական մրցույթի արտամրցութային ստեղծագործությունների շարքում:
Տես՝ https://arvestaser.wordpress.com/2017/09/26/karine-panosyan-mahacogh-antarner/




## ԻՆՉՊԵ՞Ս ՈՒՆԵՆԱԼ ԱՅՍՊԻՍԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳԻՐՔ

Ուզո՞ւմ եք, որպեսզի Ձեր ստեղծագործություններն հասանելի լինեն ամբո՛ղջ աշխարհում: Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս, որպեսզի ավանդական արժեքների հետ մեկտեղ *(տպագիր գիրք, թերթ, գրական հանդես, տարբեր այլ պարբերականներ)*, արդյունավետ կերպով օգտվեք նաև թվային գործիքարանի արդի վիթխարի հնարավորություններից՝ դարձնելով Ձեր բաղձալի՛ երազանքն իրականությո՛ւն:

Դուք ցանկանում եք հրապարակել և ճանաչելի դարձնել Ձեր գրական ստեղծագործությունները, սակայն, ցավոք, առայժմ չունեք բավարար հնարավորություն գիրք հրատարակելու համար: Այդ դեպքում կարող եք հրապարակել էլեկտրոնային գիրք (eBook), որը ֆինանսական առումով անհամեմա՛տ ավելի մատչելի է և, իհարկե, անհամեմա՛տ ավելի մեծ է դրա տարածման շրջանակը, այն ընդգրկում է ամբո՛ղջ աշխարհը: Էլեկտրոնային գիրքը կարելի է պահել ցանկացա՛ծ կրիչում, էլեկտրոնային փոստով ուղարկել աշխարհի ցանկացա՛ծ անկյունում գտնվող Ձեր սիրելի ընթերցողին, ավելին՝ էլեկտրոնային գրքի արագ տարածման շնորհիվ Դուք կարող եք ձեռք բերել բազմաթիվ նո՛ր ընթերցողներ:

Բացի լայն տարածման հնարավորությունից, էլեկտրոնային գիրքը չունի նաև ծավալի, ձևավորման, գունավոր կամ սև ու սպիտակ տպագրության և բազմաթիվ այլ խնդիրներ, որոնցից հաճախ զգալիորեն կախված է լինում տպագիր գրքի կյանքի կո-

չումը, ինչպես նաև դրա հրատարակության արժեքը: Էլեկտրոնային գրքի ֆայլը մնում է հավերժ ու երբեք չի մաշվում:

Ճիշտ է, պետք է նշեմ, որ գրքի հրատարակման առումով ես ինքս ավանդական արժեքների ջատագով եմ ու, առաջին հերթին, նախապատվությունը տալիս եմ տպագիր գրքին՝ որպես մտքի ու հոգու արգասիքի առարկայական մարմնացում և մնայուն արժեք ունեցող արտադրանք: Որպես ասածիս վկայություն՝ նշեմ, որ արդեն լույս են տեսել իմ մի քանի հեղինակային գրքեր, որոնք գտնվում են Հայաստանի ու աշխարհի այլ երկրների տարբեր գրադարաններում, այդ թվում՝ աշխարհի ամենամեծ՝ **Կոնգրեսի գրադարանում (ԱՄՆ)**: Գրքերս վաճառվում են նաև գրախանութներում: Հատկանշական է, որ դրանք ձևավորում եմ ինքս, անգամ գրքերիս շապիկներն են մշտապես իմ հեղինակային մտահղացումները:

Հարգելով ու մեծարելով տպագիր գիրքը, միևնույն ժամանակ, խորապես համոզված եմ, որ ավանդական արժեքներ կրող հեղինակը պետք է նաև քայլի ժամանակի հետ համընթաց և ճկուն ու օգտակար կերպով գործարկի ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Չէ՞ որ կյանքը առաջ է գնում, զարգանում, և այսօր, օրինակ, ավանդական տեղեկատվական միջոցների կողքին անթիվ ու անհամար են նաև թվային միջոցները, կայքերը և այլն:

Հաշվի առնելով այս հանգամանքը, վերջին տարիների ընթացքում, բացի տպագիր գրքերիցս, ես նաև ինքս պատրաստել ու հրապարակել եմ իմ բազմաթիվ գրական ստեղծագործություններ՝ էլեկտրոնային գրքերի տեսքով: Դրանք արագ ու լայն տարածում են գտել աշխարհի տարբեր կետերում, անգամ այնպիսի տեղերում, որտեղ երբևէ չէի կարողանա կամ էլ բավական մեծ դժվարությամբ կկարողանայի առաքել իմ տպագիր գրքերիցս որևէ մեկը: Էլեկտրոնային գրքի տարածման ճկունության շնորհիվ աննախադեպ կերպով մեծացել է ընթերցողներիս աշխարհագրությունը՝ Ալյասկայից *(Հյուսիսային Ամերիկա)* մինչև Չիլի *(Հարավային Ամերիկա)*, Պորտուգալիայից *(Եվրոպա)* մինչև Ավստրալիա:

Հավելեմ, որ այն առաջին հայ հեղինակներից եմ, ով իր էլեկտրոնային գրքերը պարտադիր կերպով գրանցում է նաև ՀՀ Ազգային գրադարանում գործող Ազգային գրապալատի շտեմարանում, ինչի շնորհիվ գրքերն ունենում են իրենց գրքանիշային կոդը, հրապարակման լիցենզիան, և օրենքով պաշտպանվում է դրանց հեղինակային իրավունքը:

Բացի իմ eBook-ներից, ես էլեկտրոնային գրքեր պատրաստել եմ նաև մի շարք այլ հեղինակների համար, ինչը ինձ համար յուրօրինակ ստեղծագործական պրոցես է և մեծ բավականություն է պատճառում:

Սիրելի՛ բարեկամներ, աշխարհի տարբեր անկյուններում Ձեր հայ ու օտարազգի ընթերցողին կարող եք գտնել նաև Դո՛ւք, այս ամենը հասանելի է նաև Ձե՛զ: Այնպես որ, եթե հեղինակ եք և ունեք մեծ ու վստահ ցանկություն հանրահռչակելու Ձեր աշխատանքները, ունենալու ժամանակակից, շարժական, գեղեցիկ ձևավորված ու հետաքրքիր էլեկտրոնային գիրք, ապա այս առաջարկը հե՛նց Ձեզ համար է: Ժամանակն է ստեղծելու ու հրապարակելու Ձե՛ր գիրքը, սկզբի համար՝ թեկուզ էլեկտրոնային: Գիրք, որում կներկայացվեն Ձեր նվիրական աշխատանքները և, վերջապես, գի՛րք, որը կդառնա Ձեր արվեստի յուրահատուկ թվային այցեքարտն ամբո՛ղջ աշխարհում:

Ի՞նչ է հարկավոր սեփական էլեկտրոնային գիրք ունենալու համար: Որպես e-Book-ի պատրաստման փորձառու և հմուտ հեղինակ ու խմբագիր՝ կարող եմ ինքս պատրաստել Ձեր գիրքը: Աշխատանքի մեջ մտնում են՝ գրքի շապիկի ձևավորումը, բովանդակության մշակումը՝ սեղմվող վերնագրերով մենյույի հարմարավետ հնարավորությամբ (ինտերակտիվ «PDF»), գրքի տեքստի սրբագրումն ու էջադրումը, պարտադիր էջերի ու ներդիրների գեղարվեստական ձևավորումը, իսկ վերջում՝ բարձր կետայնությամբ որակյալ «PDF» ֆայլի պատրաստումն ու տրամադրումը պատվիրատուին:

Հավելեմ, որ ի տարբերություն էլեկտրոնային գրքերի պատրաստման այլ ծրագրային ձևաչափերի՝ հենց «PDF» ձևաչափով ֆայլերն են ամենաունիվերսալն աշխարհում, քանի որ կիրառելի են ցանկացած օպերացիոն համակարգ ունեցող սարքավորման

համար *(Smartphone, iPad, Notebook, Computer և՛ն)*, գործածական և նախընտրելի են գրքի որակյալ տպագրության դեպքում և, հատկապես, չափազանց հարմարավետ են՝ գրքի ֆայլն էլեկտրոնային փոստով ուղարկելիս:

Եվս մի կարևոր հանգամանք. եթե Ձեր էլեկտրոնային գիրքը պատրաստում եմ ես, ապա Ձեզ համար դրա կարևոր առավելություններից մեկն էլ այն է, որ ես սկսում եմ զբաղվել նաև դրա հանրահռչակմամբ, առաջմղմամբ և տարածմամբ՝ բլոգոլորտի և սոցիալական մեդիայի իմ հսկայական լսարանում:

Եվ այսպես, եթե Ձեզ հետաքրքրեց այս առաջարկը, ապա հենց հիմա կապվեք ինձ հետ էլեկտրոնային փոստի հասցեով՝ shahverdyan.arlen@gmail.com կամ **«Ֆեյսբուքով»**՝ մեր ապագա համագործակցության նպատակով բովանդակային, տեխնիկական և ֆինանսական բոլոր մանրամասներին տեղեկանալու համար:

Դարձե՛ք էլեկտրոնային գիրք ունեցող երջանիկ հեղինակներից մեկը:

Հարգանքով՝
**Առլեն Շահվերդյան**

Նյութի աղբյուրը՝ https://arlenshah.wordpress.com/2017/08/13/arlen-shahverdyan-how-to-have-an-ebook/

# ՀԱՆՈՒՆ ԲՆՈՒԹՅԱՆ

## ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**Էլեկտրոնային գիրք**

Խմբագիր, ձևավորող և պատրաստող՝
**Առլեն Շահվերդյան**

Խմբագիր-սրբագրիչներ՝
**Քրիստինե Փիրոյան**, **Նելա Բաղդասարյան**

Գրական բլոգ-կայք՝ https://arlenshah.wordpress.com/

Ֆեյսբուք՝ https://www.facebook.com/ArlenShahverdyan

Էլ. փոստ՝ shahverdyan.arlen@gmail.com

Գրքում օգտագործված լուսանկարների աղբյուրները
(The sources of the photos used in this e-Book)՝
www.badfon.ru, www.goodfon.ru, www.artfile.ru

Գրքում օգտագործված տառատեսակները՝
GHEA Grapalat, Sylfaen

«Հանուն Բնության» էլեկտրոնային գրքի բոլոր
իրավունքները պաշտպանված են, 2017 թ.

This e-Book is Copyright protected
© All Rights Reserved, 2017